Նորին՝ և նոր 'ի նորոյ զարդարել ամենայն պիտոյիւք, եւ պատրաստել զնա իբրեւ օթեւան Կուսակալի, և սահմանել յամիսն 2000 դահեկան 'ի պէտս խոհանոցի. նոյնպէս 1900 դահեկան Մուվէլլային և Ճարտարապետին՝ ակն ունելով թերեւս օգնութիւն գտանել 'ի նոցանէ։ Ցետ այնորիկ՝ պատմէր Նուրի Էֆէնտի առանձին Պատրիարքին և միաբանացն Հայոց զանցս Դամասկոսի. թէ ո՞րպէս չյաժարէր Կուսակալն իմանալ զմիտս հրովարտակին, և հանապազ երկրորդէր, թէ զարմանալի իմն է գործ Տէրութեան. զի յառաջագոյն Ցունաց ետ հրովարտակ, այժմ Հայոց. և զկնի աւուրց ինչ դարձեալ Ցունաց 'ի թախանձելն նոցա։ Առ այս տայ պատասխանի Նուրի. թագաւորն 'ի միջոցի չորից ամաց ետ դատ վարել 'ի 12 նիստս եւ ունկնդիր եղեւ. և յետ այնորիկ հրովարտակօք առաքեաց զմեզ 'ի կողմանս յայսոսիկ. իսկ դուք ո՞րպիսի եղանակաւ կամիք իմանալ զմիտս նոցին. և որպէս վայելէ մեծի իշխանութեան ձերոյ, գրով (պույրիլտի) եւ ոստիկանաւ առաքեցէք զմեզ յերուսաղէմ և զհրովարտակն տուք արձանագրել ասա 'ի Դատարանի, եւ ընդել զարձանագրութիւնն առաջին հրովարտակին տուեալ 'ի թուին ١٢٢٤ և նշանակելով զայն 'ի հրամանագրի ձերում. ապա թէ ոչ, տուք մեզ պատասխանի՝ Իլամ և նամակ. զի մեք դարձցուք առ Արքայն որ առաքեացն զմեզ։ Զարմացեալ Կուսակալին ընդ համարձակ բանս առնն, հրամայէր կատարել զամենայն ինչ ըստ հրամանի Արքային։ Ապա գրեաց հրաման սաստիկ և կարգեաց ոստիկան զհաւատարիմն իւր։ Ցետ այնորիկ ազդ արար նմա Նուրի զդաւաճանութիւն Խօճաքեանին. փորձեալ զնա յընկերակցութեան իւրում 'ի ճանապարհի, և ուստուցանէր զդուշանալ 'ի նմանէ. եւ մեք սիրով վարիմք ասէ՝ ընդ նմա. զի թերեւս կարասցուք հասանիլ 'ի նպատակ գործոյս։

Խօճաքեանն յերուսաղէմ միայն պատիր բանիւք 'ի վերին երեսս յուսադրէր զՀայս. իսկ ոստիկան Կուսակալին յայտնի համարձակ խրախոյս տայր չերկնչիլ բնաւ. զի ամենայն ինչ ասէր՝ ըստ հրամանի Արքային և տեսուն իմոյ Կուսակալին ունի կատարիլ։ Եւ եղեւ վերստին չոշափել Հայոց զերակ դատաւորին, զտին զնա դեղեալ, հիւանդ